# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի մարտի 29-ի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության հարցը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Դավիթ Միերի Խաչատուրյանին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրելու վերաբերյալ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով և 75-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2018 թվականի մայիսի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 02Լ որոշման հավելված 1-ի 72-74-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրված՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր **Դավիթ Միերի Խաչատուրյանի** թեկնածությունն առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**29 մարտի 2024թ.**
**ք. Երևան**